3107

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«14» 03 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0018-22

Ձեռնարկողը՝ *«Էյ Սի Գրուպ» ՍՊԸ*

ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք վ/շ. Ջուղայի փ. 4 շ. բն.49

Գործունեությունը՝ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքի, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոցի թիվ 60, 66 և 38-րդ փողոցի թիվ 21, 25 հասցեներում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գ.Ջրվեժ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0018-22
<14> 03 2022թ.

«Էյ Սի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ 49-րդ փողոցի թիվ 60, 66 և 38-րդ փողոցի թիվ 21, 25 հասցեներում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Էյ Սի Գրուպ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոցի թիվ 60, 66, և 38-րդ փողոցի թիվ 21, 25 հասցեներ

Ներածական մաս. Գործունեության նպատակն է՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ 49-րդ փողոցի թիվ 60, 66 և 38-րդ փողոցի թիվ 21, 25 հասցեներում կառուցել ժամակակից բնակելի թաղամաս, որտեղ առկա կլինեն մենատներ, չորս հարկանի բազմաբնակարան շենքեր, սպորտ դահլիճ, սրճարան և թենիսի խաղահրապարակ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ը /նախատեսվող բնակելի թաղամասի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 9666.0 ք.մ/:

Նախատեսվող բնակելի թաղամասի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները՝ N 16072021-07-0101, **5528 մ²** /ծածկագիրը՝ 07-057-0315-0111/, N 16072021-07-0103, **1937 մ²** /ծածկագիրը՝ 07-057-0315-0110/, N 16072021-07-0105, **3152 մ²** /ծածկագիրը՝ 07-057-0315-0109/ և N 05102021-07-0118, **4427 մ²** /ծածկագիրը՝ 07-057-0315-0108/, Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի կողմից 27.08.2021թ. տրված N136, N137, N138 և N139 ճարտարապետահատակագծային առաջադրանքները (նախագծման թույլտվություն): Հողամասը բաղկացած է չորս հողակտորից, ընդհանուր մակերեսը կազմում է **1.5044 հա**: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման /ծածկագրերը՝ 07-057-0315-0109, 07-057-0315-0110, 07-057-0315-0111/ և հասարակական կառուցապատման /ծածկագիրը՝ 07-057-0315-0108/, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է բնակելի տների հարևանությամբ: Մոտակայքում առկա չէ հասարակական նշանակության շենք շինություններ: Համայնքում առկա հասարակական նշանակության շենքերից նախատեսվող բնակելի թաղամասի հեռավորությունը կազմում է նվազագույնը 400-500մ: Տարածքում հողաբուսաշերտը

հիմնականում բացակայում է, ծառաթուփային բուսականությունը հիմնականում բացակայում է: Մոտակայքում մակերևույթային ջրային ռեսուրսներ չկան:

Նախատեսվող գործունեության տարածքը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների համար: Ռելիեֆի բացարձակ նիշը ծովի մակարդակից կազմում է 1415.0 մ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը ընկած են 30մ ավել խորության վրա:

Համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզի ուսումասիրվող շրջանը պատկանում է 2-րդ սեյսմիկ գոտուն: Ըստ սեյսմիկ հատկությունների, համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006թ. գրունտները, որոնք ընկած են այդ տարածքում պատկանում են II կարգին:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող բնակելի թաղամաս: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար: Նախատեսվող բնակելի թաղամասի տարածքը գտնվում է Երևան քաղաքից /Հանրապետության հրապարակից/ 9.3կմ հեռավորության վրա:

Թաղամասը գտնվում է Ջրվեժ գյուղում և բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Այն սահմանակից է մայրաքաղաքի Նոր Նորք վարչական տարածքի հետ և կապված է մայրաքաղաքի հետ ասֆալտապատ ճանապարհներով: Մոտակա բնակավայրերն են նաև Ողջաբերդ և Ձորաղբյուր գյուղերը: Գյուղը չունի հարթ մակերես: Հյուսիսային մասում այն կտրտված է ձորակներով, արևելյան մասից սկիզբ են առնում Ձորաղբյուրի և Ողջաբերդի լեռնաբազուկները, հարավային մասում խոր ձորակներ են, որոնք շարունակվում են մինչև Արին-Բերդ, արևմտյան կողմով՝ ձորերով և կիրճերով միանում է Երևանին: Ջրվեժ գյուղը ծովի մակարդակից բարձր է 1360.0 մ, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ:

Մորֆոլոգիական առումով աշխատանքների շրջանը գտնվում է Նոր Նորքի հարթակի վրա: Տեղամասում տարածված են հրաբխային ապարներ, ծածկված պրոլյուվիալ, էլյուվիալ, դելյուվիալ նստվածքներով: Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Նախատեսվող գործունեության տարածքում ընկած գրունտերի որոշման համար օգտագործվել են արհեստական և բնական մերկացումների ուսումնասիրությունը, ինչպես նաև ֆոնդային տվյալները:

Նախատեսվող բնակելի թաղամասն առանձնացված պարսպապատ փակ թաղամաս է, որտեղ նախատեսվում է կառուցել 10 առանձնատներ և 6 քառահարկ բազմաբնակարան շենքերը (նկուղային հարկերով), ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքներ:

5528 մ² հողատարածքի վրա նախատեսված է կառուցել 4 հարկանի 4 բազմաբնակարան շենք: Շենքի 0,00 նիշից ցածր տարածքում նախատեսված է ավտոկայանատեղիներ՝ 1-ին շենքում 18 մեքենայի համար, 2-րդ շենքում 11 մեքենայի համար, 3-րդ շենքում 18 մեքենայի համար, 4-րդ շենքում նույնպես 18 մեքենայի համար: 1-ին շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 6 բնակարաններ: 2-րդ շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 4 բնակարաններ: 3-րդ շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 6 բնակարաններ: 4-րդ շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 6 բնակարաններ:

1937 մ² հողատարածքի վրա նախատեսված է կառուցել 4 հարկանի 2 բազմաբնակարան շենք: 5-րդ շենքի 0,00 նիշից ցածր տարածքում նախատեսված է, առևտրի սրահ՝ դրան կից պահեստային տարածք, ադմինիստրատիվ սենյակներ, հանդերձարան և սանհանգույցներ:

6-րդ շենքի 0,00 նիշից ցածր տարածքում նախատեսված է ավտոկայանատեղի 11 մեքենայի համար: 5-րդ շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 4

բնակարաններ: 6-րդ շենքի յուրաքանչյուր տիպային հարկերում տեղակայված են 4 բնակարաններ:

3152 մ² հողատարածքի վրա նախատեսված է կառուցել 10 մենատուն: Մենատները բաղկացած են 3 հարկից:

4427 մ² հողատարածքի վրա նախատեսված է կառուցել սպորտդահլիճ, սրճարան և թենիսի խաղահրապարակ: Սպորտդահլիճում նախատեսված է լողավազան, մարզասրահ, շոգեբաղնիք, միջանցք, Ս/Հ, հանդերձարան և նախամուտք:

Շենքերի, մենատների, կառույցների մուտքերը նախատեսված են բակի կողմից:

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ երկաթբետոնե կոնստրուկցիաներով: Առանձնատների և քառահարկ շենքերի որմնախարիսխը բազալտից է, արտաքին ճակատները նախատեսվում է երեսապատել տուֆե և տրավերտինե սալերով, երեսապատել կամ սվաղել ցեմենտ-ավազե շաղախով, ապա ներկել:

Նախագծի փաթեթներ	Հողի մակերեսը (մ²)	9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսների հարաբերությունը հողամասի մակերեսին)	9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)
Ջրվեժ 49-րդ փողոց 60 հողամաս, կադ. ծածկագիրը՝ 07-057-0315-0111	5,528	1.91 (191%)	66%	34%
Ջրվեժ 38-րդ փողոց 21 հողամաս, կադ. ծածկագիրը՝ 07-057-0315-0110	1,937	2.17 (217%)	81%	19%
Ջրվեժ 49-րդ փողոց 66 հողամաս, կադ. ծածկագիրը՝ 07-057-0315-0109	3,152	0.86 (86%)	71%	29%
Ջրվեժ 38-րդ փողոց 25 հողամաս, կադ. ծածկագիրը՝ 07-057-0315-0108	4,427	1.2 (12%)	50%	50%

Բնակելի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքեր,
- Հողային աշխատանքներ,
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ,
- Պատեր և միջնապատեր,
- Տանիքային աշխատանքներ,
- Ներքին ինժեներական ցանցեր,
- Հարդարման աշխատանքներ,
- Երեսպատման աշխատանքներ,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածք և ասֆալտապատման հարթակներ:

Շինարարության նորմատիվ տևողությունն որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության տևողությունը կազմում է 36 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- Մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանք կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված ստանալ թույլտվություններ:
- Իրականացնել հողային աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև քանդման աշխատանքներ համաձայն համայնքապետարանի կողմից տրված թույլտվության:
- Կազմակերպել շինհրապարակն՝ անհրաժեշտ ենթակառույցներով:
- Տարածքը մաքրել շինարարական աղբից և ապամոնտաժված տարրերից, որոնք բարձվում են ինքնաթափեր և տեղափոխվում համապատասխան աղբավայր:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Շինարարական իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել համաձայն քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների: Շին. հրապարակը կոմպլետավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Աշխատանքի պաշտպանություն.

- Բանվորների աշխատանքի պաշտպանությունն ապահովելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ կոշիկներ, արտահագուստ) համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (լուսավորում, օդափոխություն, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:
- Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
- Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվում հրահանգավորում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթաքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
- Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգավորման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված միջոցառումների կատարման հսկողության վերապահվում է աշխատանքներն իրականցնող կազմակերպությանը:

Շինտեխնիկայի տեղաշարժ.

- մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,
- բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ,
- տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը նախատեսվում է 40 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ, բանվորներ, սպասարկող աշխատողներ՝ 37 մարդ:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը հետևյալն է՝ ավտոկռունկ MAZ՝ 1 միավոր, JCB տրակտոր՝ 1 միավոր, բեռնատար՝ 2 միավոր, էլ. եռակցման սարք՝ 6 հատ, ձեռքի մեխանիկական գործիքներ, ատաղձագործական գործիքներ, ներկարարական գործիքներ:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Գրունտի մշակումը փոսորակում և խրամուղիներում իրականացվում է «հետ-բահ» էքսկավատորով: Մաքրամշակումն իրականցվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Բնահողի տեղափոխումն իրականցվում է ավտոինքնաթափ: Հետլիցքի համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառուցապտվող տարածքի համար հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալն ընդհանուր կկազմի մոտավորապես 2500մ^3, իսկ հետլիցքի ծավալը կկազմի՝ 1800 մ^3, ավելացած հողային ծավալը, որը կազմում է 700 մ^3 կօգտագործվի տարածքի բարեկարգման և հարթեցման համար:

Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և կպահվի տարածքում: Հետագայում բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում:

Հիմնական թափոնատեսակն, որը կառաջանա նախատեսվող գործունեության ընթացքում, դա շինարարական աղբն է, որը կառաջանա բնակելի թաղամաս կառուցման հողային աշխատանքներից և շինարարական աշխատանքներից:

Հիմնական թափոնատեսակն, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 20-30 մ^3 և շինարարական աղբը՝ կանախատեսվում է, որ կառաջանա մինչև 90 մ^3 ծավալով: Շինարարության ընթացքում իրականացվելու է շին. աղբի տեսակավորում: Առաջացած շինարարական և կենցաղային աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ընթացքում օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութ, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման (900 մ^3/շին. ժամանակ), ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար (1047.9 մ^3/շին. ժամանակ): Տեխնիկական ջրի մատակարարումը իրականացվելու է պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Համաձայն նախագծային տվյալների կանաչապատման մակերեսը կազմում է 5378 մ^2: Կանաչապատման ծրագիրն իրականացնելու համար ստեղծվելու է որոշ հատվածներում մինչև 30 սմ հաստությամբ արհեստական մակերեսային հողային շերտ՝ սիզամարգերի և ծաղկային օջախների համար: Թփերն և ծառատեսակներն տնկելու և նրանց կպչողականությունն ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 100 մ^3 սևահող, որը տրամադրվելու է համայնքի կողմից, ինչպես նաև համապատասխան քանակությամբ տորֆ և կարմիր ավազ: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, մասնավորապես կանաչապատման համար կօգտագործվի՝

- Դեկորատիվ ակացիա – 40 հատ,
- Կանադական բարդի – 100 հատ,
- Կանադական կարմիր տեսակի բարդի – 20 հատ,
- Եղևնի – 20 հատ,

- Դեկորատիվ տուա – 25 հատ,
- Կլյոն – 10 հատ,
- Մրգատու ծառեր (կեռասենի, սալոր, դեղձ, ծիրանենի, խնձորենի) - 100 հատ,
- Վարդ – 50 հատ,
- Մարժևնիք – 10 հատ,
- Սամշիթ – 30 հատ,
- Մարգախոտ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Հողային աշխատանքների ընթացքում կառաջանա 200մ^3 հողաբուսաշերտ: Հողի բերի շերտը օգտահանումը և պահպանումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներով. հողի ծածկում հատուկ վայրում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորդյուրներ): Աշխատանքների ավարտից հետո հողաբուսաշերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման նպատակով:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 12.10.2021թ. տրված N ՄՇ/31842 տեխնիկական պայմանի և N ՎՋ 5733/2021 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն:

Այսպիսով, բնակելի թաղամասի ջրամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի տարածքից մոտ 240մ հեռավորությամբ անցնող d=110մմ տրամագծի ջրագծից /P=4.0 մթն., պ/էթ/: Ջրամատակարարումը շուրջօրյա է: Ջրաչափական հանգույցների համար անհրաժեշտ է կառուցել դիտահորեր:

Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին ջրահեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի տարածքից մոտ 170մ հեռավորությամբ անցնող d=110մմ տրամագծի կոյուղագծին միացմամբ: Կոյուղագիծը միացնել գոյություն ունեցող դիտահորին:

Տաք ջրամատակարարումը և ջեռուցումը նախատեսված է անհատական կաթսաներով:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և Կառ. 08.08.2019թ. թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Բնակելի թաղամասի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից հետագայում տրամադրվելիք տեխնիկական պայմանի:

Հաշվի առնելով, որ խելացի քաղաք տեխնոլոգիաները, վերականգնվող էներգիան այսօրվա համաշխարհային մարտահրավերներից են՝ կառուցապատողը նպատակ ունի կիրառել խելացի և նորարական տեխնոլոգիաներ թաղամասի կառուցման գործում: Այդ նպատակով, արևային էներգիան կօգտագործվի ֆոտովոլտային սարքավորումների միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության և բնակելի թաղամասի կարիքների օգտագործման համար: Ըստ բնակչի ցանկության նախատեսվում է առանձնատների տանիքներին տեղադրել արևային պանելներ էլեկտրաէներգիայի արտադրության համար:

Բնակելի թաղամասի գազամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հետագայում տրամադրվելիք տեխնիկական պայմանի:

Բնակելի շենքերում օդափոխությունը նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխության համակարգերով: Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցից օդի արտածումը բնական է: Ստորգետնյա ավտոկայանատեղերի նախագիծը կատարվում է համաձայն ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում» գործող նորմերի և կանոնների: Նախատեսվում է ավտոկայանատեղիների ներածման և արտածման համակարգեր, CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում աշխատում է օդի արտածման օդամուղը: Ավտոկայանատեղերից նախատեսվում է նաև

ծխահեռացում: Նախատեսվող ներածման, արտածման և հակահրդեհային ծխահեռացման սարքավորումների աղմուկը նորմայի սահմաններում է, ձայնամեկուսացված է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Ջրվեժ համայնքի շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ: Տարածքին մոտ են Ջրվեժի անտառ-պուրակը (դեպի արևելք): Բնակելի թաղամասից մոտ 6կմ հեռավորության վրա է անցնում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի մաս կազմող Ջրվեժի անտառապարկի սահմանն, որը հիմնադրվել է 1977թ.-ին: Ներկայումս պարկը զբաղեցնում է 423.8 հա տարածք, որից անտառապատ է 260 հա:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ տեղ-տեղ հանդիպում են Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum): Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Գործունեության ենթակա և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնն, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է կամ բացառվում է: Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարարական նյութերը և քսայուղերի ժամանակավոր պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- այն հատվածներում, որտեղ նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Ջրվեժի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից,
- հողամասում ազդեցության ենթակա բուսահողը կպահեստավորվի շինարարական հրապարակի տարածքում՝ 2 մետրը չգերազանցող կույտերի ձևով և կծածկվի պաշտպանիչ պաստառներով՝ հետագայում բուսահողի նշված զանգվածը բնակլեի թաղամասի կանաչապատման աշխատանքներում օգտագործելու համար,
- շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝
    - շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
    - թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր,
    - եթե առաջանան վտանգավոր թափոններ, դրանց հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր թափոնների վնասազերծման, կամ տեղակայման լիցենզիա,
    - շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատարարներից,

- օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
  - շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
  - ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
  - պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
  - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
  - սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելու համար է փոշու տարածումը,
  - խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,
- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն և ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները և այլ հասարակական շենքերը,
- աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորնիս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, ինչպես նաև տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից, աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- հնարավորության դեպքում սահամափակել միաժամանակ աշխատող ծանր տեխնիկայի /բուլդոզեր, էքսկավատոր/ շահագործումից,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝
  - մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
  - մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ. օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում,
  - հակահրդեհային պաշտպանությունը իրականացվելու է ըստ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ համաձայնեցված ինժեներական նախագծերի,
  - տարածքում նախատեսված է հակահրդեհային հիդրանտի տեղադրում,
  - մշտապես իրականացնել շին. հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկային կայանման համար,
  - հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

• հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

• շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,

• բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ (հատուկ կոշիկներ, արտահագուստ) համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (լուսավորում, օդափոխություն, պաշտպանիչ ու արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան: Որպես ապաստարաններ, թաքստոցներ ծառայելու են բնակելի թաղամասի նկուղները, ինչպես նաև Ջրվեժ համայնքում առկա թաքստոցները, ապաստարանները:

- նախագծվող տեղամասում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/ և կազմակերպել իրականացվող աշխատանքների մշտադիտարկում:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար: ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականցվեն կանոնավոր միշտադիտարկումներ:

Բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագիրը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկման պլանը համալիր ներկայացված են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում /այսուհետ՝ Հայտ/:

Բնակելի թաղամասի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
5. Կանաչապատման մոնիթորինգ:

Կառուցապատման ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1մլն ՀՀ դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 3մլն ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից,

Կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բնակելի թաղամասի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնը մատակարարել պատրաստի վիճակում մոտակա բետոնահանգույցից, բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի/մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:

7. Վերջնական նախագծում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:

8. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության:

9. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էյ Սի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված,Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ 49-րդ փողոցի թիվ 60, 66 և 38-րդ փողոցի թիվ 21, 25 հասցեներում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Վ. Վարդանյան